ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2025 թվականի N 617 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, Աշտարակ քաղ., Տիգրան Մեծի փողոց 35/1 հասցեում գտնվող 1046,5 քառ. մետր մակերեսով ուսումնական մասնաշենքը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 1,297 հա մակերեսով հողամասը՝ շենքի պահպանման և սպասարկման համար հատկացված 0.958987 հա մակերեսով հողամասի նկատմամբ սեփականատիրոջ (սեփականատերերի) բաժնեմասը կազմում է 1046,5/4965,5 (սեփականության վկայական՝ N 08022023-02-0040, այսուհետ՝ անշարժ գույք), անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Աշտարակի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակեր-

պությանը (գրանցման համար՝ 16.210.00858/2003-03-17, հասցեն՝ Հայաստան, Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, Աշտարակ քաղ., Տիգրան Մեծի 35, այսուհետ՝ կազմակերպություն):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ